№ 163 Սեպտեմբերի 2 (14) 1881 Սեպտեմբերի 2 (14) № 163

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են մինչև խմբագրատան մէջ։

Ստորագրողներից գինում են ազդակի

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Հայտարարութիւնների համար, վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ղազկաձորից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ Անգլիա։ Ամերիկա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ԱԼԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Քանապարհորդութիւն դէպի փոքր-Մասիսի գագաթը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾԱՂԿԱՁՈՐԻՑ

Օգոստոսի 20

Ամեն տարի ապրիլ և մայիս ամիսներում Երևանի նահանգական կառավարութիւնը պատրաստութիւն է տեսնում Ղազկաձորում ամարային միջոցը կապակցելու մէկ կամ երկու կապարատների հետ, որ նրանք հայթայթեն գիւանական ծառայողներին կենսական ուտելեղեն մթերքները՝ հաց, միս, խմիչք և այլն։ Այս տարի գարնանը պ. Նահանգապետ գեներալ Շալիկով, մասնաժողով կազմեց իւրաքանչիւր գիւանատան պատգամաւորներից, որ մի կերպ ապահի կապարատների ձեռքից մեր ատոիճանաւորների երեք ամսվայ, ես առաւել ստորին ատոիճանաւորների գրութիւնը, որ Ղազկաձորում լինի կամաւոր առաւուր կենսական պիտոյքներ։ Բայց դժբաղդաբար այդ չաջողվեց։ Գարձեալ հացի, միսի և խմիչքի համար պայման կապվեցաւ մէկ վաճառականի հետ, որը պարտաւորվեցաւ այդ վերոյիշեալ մթերքները ծախել այն գնով, ինչ որ կայ Երևանում։ Մինչև կէս կոպէկ իւրաքանչիւր ֆունտի վրա աւել, իսկ միւս ուտելիքից պաշարները կամաւոր առուտուրով։ Պ. Նահանգապետը նկատելով որ թերի մնաց իր կամքը, այստեղի կամաւոր առուտուրի մասին, երկար խորհուրդ անելուց յետոյ, կազմեց մի նոր մասնաժողով, որը բաղկանում է մէկ նախագահից և երեք անդամներից, որին յանձնեց առանց տոկոսի 400 ռուբլի դրամ փոխարինաբար և այստեղի մի արքունական տուն չորս սենեակից, որ մասնաժողովը փոխ առած դրամով կարգադրի կազմելու մէկ ընկերական ճաշատուն (артельная столовая)։ սակաւ ռոճիկ ստացող գիւանատներում ծառայող ատոիճանաւորներին, եւ առաւել զրաքներին նիւթական օգնութիւն հասցնելու համար։ Արդարև այդ բարի նպատակը պ. Նահանգապետի պատկիցեաւ մեծ աջողութեամբ։ Մասնաժողովը մայիս ամսում Երևանում աչխատեց Լծան գներով ճաշարանի համար ձեռք բերել սեղաններ, աթոռներ և ամեն տեսակ որպէս սեղանատան, նոյնպէս խոհանոցի համար իրեղէններ ու ամանեղէններ, 30 հոգու համար, վարձեց մէկ լաւ խոհարար և երկու ծառայ, մասնաժողովը կազմեց կանոններ այդ ճաշատան համար։ Անցեալ յունիս ամսի 16-ից ընկերական ճաշատունը բացվեցաւ, այժմ երեսուն հոգի ատոիճանաւորներ, որոնց մեծ մասը ամուսնացած չեն, ճաշում են այդտեղ։ Իւրաքանչիւր օրը պատրաստվում են երեք տեսակ կերակուրներ, երկուսը ճաշին և մէկը ընթրիքին։ Իսկ կիրակի և ասնի օրերը ճաշին երեք կերակուր, մաքուր և լաւ պատրաստված։ Այժմ ընտանեաց տէր ատոիճանաւորներից շատերը նախանձում են ընկերութեան ճաշարանի վրա։ Ճաշատան համար բոլոր գնած իրեղէնների փոքր գումարը հասաւ 250 ռ.։ Յունիսի 15-ից մինչև օգոստոսի 1-ը մասնաժողովը հաշիւ տեսաւ, որից երևաց որ այդ միջոցին պատրաստվել է մօտ 3,200 բաժին կերակուր (порціи)։ ամեն մի բաժինը արժեցաւ 10—12½ կոպ. հացի հետ, չը նայելով որ մեզանում հացի ֆունտը յունիս ամսին ծախվում էր 4 կ., մսի ֆունտը 10 կ., միւս ուտելիքները նոյնպէս թանգ։ Մասնաժողովը վճռեց որ ծախս արած և փոխ առած գումարը լրացնելու համար երեք ամսվայ վրա բաժանի և ամեն մի բաժին կերակրի վրա հաշվի երկու կոպէկ, որ փոխառած գումարը լրացվի։ այդ վերադիրը աւել ռոճիկ ստացող ատոիճանաւորների վրա դրվեցաւ։ Այդպէս երեք ամսվայ ընթացքում կը լրացվի այդ գումարը, իսկ իրեղէնները կը մնան յոգուտ ճաշարանի։ Պիտի ասեմ որ յունիս ամսին կերակրի բաժինը էժան եղաւ, որովհետև հացի ֆունտը ծախվեցաւ 3½ կոպ., իսկ մսինը 8½ կոպ.։ Ատոիճանաւորները ոչ թէ ստանում են կերակուրը բաժիններով, ինչպէս հիւրանոցներում, մանաւանդ ջրաի կերակրները, այլ ուտում են անքան որքան ցանկանում են։

Դիշերները ատոիճանաւորներին, որոնք ցանկանում են թուղթ խաղալու, առած է իրաւունք ժողովվել ճաշատուն երկու առանձին սենեակներում և խաղալ։ Արդիւնքը թղթախաղութեան եկամուտ է գրվում ընկերութեան ճաշարանին։ Մասնաժողովի կարգադրութեամբ ընտրվեցան եօթ անձինք ճաշանոցներից հերթապահներ, որոց պարտքն է կարգ ու կանոն պահպանել ճաշատանը։ Ճաշանոցները բաղկանում են դիւանատների մէջ ծառայող հայ, ռուս և թուրք ատոիճանաւորներից, որոնք իրանց ճաշի վարձը հատուցանում են միշտ ամսվայ վերջին, երբ ռոճիկները ստանում են։

Ամսոյս 16-ին սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնի օրը այստեղ խիստ շքեղ կատարվեցաւ։ Սուրբ պատարագից յետոյ կատարվեցաւ խաղող օրհնութեան խորհուրդը։ Մեծ տպաւորութիւն ունեցաւ ժողովրդի վրա քարոզը, որը կարդաց այդ օրը մեր առաջնորդ Գէորգ վարդապետ Սուրէնեանց։ Քարոզը վերաբերում էր վերափոխման տօնին։ ընդամէնը մեր բերեց ժողովրդի ուշադրութիւնը, որ նա իր նիւթական օժանդակութեամբ պիտի պաշտպանել Լ-ջանիսի վանքի աւերակները։ Այդ օրը եկեղեցին լի էր հայ և ռուս ժողովրդականներով և եկեղեցում ներկայ էր պ. Նահանգապետը և մեծ մի քանի բարձր ատոիճանաւորները։

Այս տարի Երևանում չատ ջերմ լինելու պատճառով Ղազկաձոր ամարանոց չատ ընտանիքներ են եկել։ այնպէս որ այստեղ տներ չը լինելու պատճառով Երևանի մի քանի խաները, բէկերը և հարուստ վաճառականները մեծ փոքրով վարձել են մալաականների գոմերը, զարդարելով նրանց՝ խորասանի խալիներով և գիւրդիստանի փալասներով։ Պիտի ասած որ Երևանցիք չատ անասարեր և անհոգ մարդիկ են։ Քանի տարի սրանից առաջ տէրութեան կողմից կարգադրված է, թէ ով որ ցանկանայ չինութիւն անելու այստեղ, կարող է գնել թագաւորական հող Ղազկաձորում 150 մինչև 300 սաժէն, կամ իր բնակվելու համար կամ վարձով տալու, և տարեկան տալ գանձարանին սաժէնից 2 կոպէկ, հողը մնալով առնողի սեպհականութիւն որդոց որդու։ Ջորս կամ հինգ մարդ միմիայն չինել են իրանց համար տներ, միւս հողերը, հարիւր կտրից աւելի, մնում են պարապ։ Թէ ինչ են մտածում մեր հարուստ վաճառականները և մուքատէրերը յայտնի չէ, զրկելով իրանց այստեղի պատուական օգից և ջրից, այլ դատապարտելով իրանց անձը Երևանի անտանելի օդին և մեծակների ու մլաքների խայթմունքին։

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Կոստանդին Եղիազարեանից 4 ր., «Փուրնալ դ'Օրիան» լրագրի համար։ Առաջվայ փոդերի հետ կանի 325 ռուբլ։

Ստացանք ՅԱՐԻՑԻՆԻՑ, պ. Զանմանասարեանի ձեռքով 80 ռուբլ, տաս բաժանորդ «Փուրնալ դ'Օրիան» լրագրի համար։ Առաջվայ փոդերի հետ կանի ուրեմն, 405 ռուբլ։

ՄՕԶԴՈՒԿԻՑ մեզ գրում են, «Պ. Կարապետ Իշխանեանց, որ ենթարկված է ծանր դատաստանական գործին, խոստացել է որ եթէ ազատ մնչև այդ կայարանը։ Բուրլանից 4½ ժամում հասանք Մասխսների թամքը, որ գտնվում է մեծ և փոքր Մասիսների գագաթների ստորոտում։ այդտեղն անուանվում է Նանապա Արգար-Բուլաղ։ Արգար-Բուլաղը մի խումբ զանգիների ամարանոց է։ Արաքսից մինչև Մասիսների իսկ ստորոտը կը լինի մօտաւորապէս 20 վերստ։ Երբ հասանք Մասիսների թամքը, այսինքն Արգար-Բուլաղ տեղը, մեր առաջ բացվեց մի մեծ կանանչ դաշտ։ Այդ դաշտն անցնում է մեծ և փոքր Մասիսների գագաթների ստորոտով, որ տանում է Ջաճկասան և Պարսկաստան։ Դաշտի երկայնութիւնը այդ ուղղութեամբ կը լինի 10 վերստ, իսկ գագաթների ստորոտների հեռաւորութիւնը 2—3 վերստ և գագաթները հեռու կը լինեն միմեանցից մօտաւորապէս 5—6 վերստ։

Փոքր Մասիսի ստորոտում այդ դաշտի վրա, ռուսաց և պարսից կողմից կան գանազան տեղ թխտենուց (բէրէզա) փոքրիկ անտառներ։ Այն քառակուսիներն սև տեղը, որ Երևանից տեսնում ենք փոքր Մասիսի ստորոտում, ռուսաց հողի վրա, դա է թխտենուց փոքրիկ անտառ, որի ծառերը ունեն 3—4 արշին բարձրութիւն։ գրանք բարակ թուփեր են։ Պարսաց հողի վրա, փոքր Մասիսի ստորոտում կայ թխտենուց փոքրիկ անտառ, որի ծառերը ունեն 2—3 սաժէն բարձրութիւն։ Այդ նորաբոյս անտառները անխնայ կտրում և ոչընչացնում են վրանարկի քրտերը և յոյս չը կայ որ այդ ծառի տեղն աճի և բաղմանայ Մասիսների ստորոտներում։

Յուլիսի 17-ին 1881 թ., առաւօտեան 4 ժամին ձիերով գնացինք դէպի փոքր Մասիսի ստորոտը և առաւօտեան 5 ժամին այնտեղ հասանք, որտեղից պէտք է ոտով բարձրանայինք։ Երբ ձիերից իջանք, հարցրեցի իմ առաջնորդիս.— Մարտիրոս, ինչ ես կարծում, կարելի է արդեօք բարձրանալ մեծ Մասիսի գագաթը։ «Չէ, աղա ջան», պատասխանեց Մարտիրոսը, «Սուրբ Յակոբն ինքն փորեց բարձրանալ, որ Նոյի տապանը համբուրի, նա ամեն օր էնքան էր բարձրանում, որ հը մի քիչ էր մնում որ տեղը հասնի, մութն ընկնում էր և սուրբ Յակոբը հոգնած պարկում էր քնելու, բայց առաւօտ զարթնելով, տեսնում էր որ Մասիսի տակն, էհ, ներքին է պարված. այդ կը նշանակի, աղա ջան, որ Աստուածանից հրաման չը կայ մեծ Մասիսի գլուխն ելնելու։ Աստուած տեսնելով սուրբ Յակոբայ փափաքը տուեց հրեշտակին տապանի փայտից, որ սուրբ Յակոբը համբուրի, չէ որ նա սուրբ էր, աղա ջան։ ի հարկէ, որտեղ նա տապանի փայտը համբուրեց, այնտեղ վանք չինեց՝ սուրբ Յակոբայ վանքը, մնացեալ նրա սուրբ գօրութիւնն։

—Մարտիրոս, ուրեմն ասում ես, որ չէ կարելի։—Չէ, աղա ջան, սուրբ Յակոբը որ սուրբ մարդ էր, նրան էլ Աստուած հրաման չը տուեց, դէհ մենք, դու ինքդ գլուխս, որ մեզաւոր մարդիկ ենք, մեզ խօ հրաման չը կայ ու չը կայ։ մակէդ հանիր ուզածդ, հրաման չը կայ։ Այ սրա գլուխը կենենք Աստուած յայտնաց, ասեց Մարտիրոսը, ցոյց տալով փոքր Մասիսը։ Ես լռեցի և մենք սկսեցինք բարձրանալ։ Ես մտածում էի, ինչի ժողովուրդը պէտք է կարծէ, թէ Աստուածային հրաման չը կայ, երեի բնական դժուարութիւններ կան։

Մենք բարձրանում էինք արևմտեան կողմից։ Նկատելով գագաթի վրա ամրոցի պարսպի նման բարձրութիւն, ուզիղ գիմեցինք դէպի այդ տեղը, փոքր Մասիսի արևմտեան կողմից։ Ստորոտը փոքր ինչ քարքարտ, բայց կանանչապատ է։ Բարձրանալով, բոյսերի տեսակները պակասում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՓՈՔՐ ՄԱՍԻՍԻ ԿԱՄ ՓՈՔՐ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԸ

1881 թ. յուլիսի 17-ին

Փոքր Մասիսն ինչպէս Արարատեան *) բարձրութիւններից երկրորդը (մեծ Մասիսից կամ մեծ Արարատից յետոյ), ունի իր ազդեցութիւնը ժողովրդի երևակայութեան վրա։ Դա կոնաձև բարձրանում է Արարատեան լեռների շղթայից, մեծ Մասիսի դրացին է և գտնվում է սրանից հարաւ—արևելեան կողմը։

Փոքր Մասիսի բարձրութիւնն է 12,840 ոտնաչափ ծովի մակերևոյթից։

Փոքր Մասիսի*) մասին ժողովրդի մէջ տարածված են պէտպէտ առասպելներ, որոնք զանազան կերպով արտայայտում են ժողովրդի հայացքն այդ լերան մասին։ Մի քանիսը պատմում են, որ փոքր Մասիսի վրա կան վիշապներ և օձեր ահագին մեծութեան, այդ պատճառով խիստ դժուար է, համարեա անկարելի է նրա գագաթը բարձրանալ։ Միւսները պատմում են, թէ գագաթը մեծ տափարակ տեղ է և վրէն քաւականին մեծ լիճ կայ, իսկ օդը սաստիկ սառն է, մինչև անգամ յուլիս ամսին։ Երրորդները ասում են, թէ գագաթի վրա ոգնաւորների (հոգիների) գերեզմաններ կան։ Չորրորդները լսել են, որ գագաթի վրա ուղտերի քարվան կայ քարացած, նաև ուղտապան էլ այնտեղ քարացած կանգնած է, մէկ ձեռով բռնած ունի առաջնորդող ուղտի սանձը։ իսկ միւս ձեռքին իր գաւազանը։ Շատերը համոզված են որ բարձրանալու լերան խորքերից կամ տակից մշտական լսվում են այնպիսի զարհուրելի խուլ ձայներ, որ մարդ սրտաճաք կարող է լինել։

Այդ առասպելները, բայց մանաւանդ փոքր Մասիսի կազմակերպութեան ուսումնասիրելու ցանկութիւնը պատճառ եղան բարձրանալ այդ լերան գագաթը, միւս կողմանէ, հայ լինելով ամօթ համարեցի ինձ համար, եթէ հայ մարդը Արարատը աչքի առաջ ունենայ և չաշխատէ մօտիկից տեսնել նրա այն մասերը, ինչ որ կարելի է տեսնել։ Հայի անիծեալ անտարբերութիւնը զգում է հայը, երբ տեսնում է որ մի որ և է անդլիացի Լօնդօնից եկել է Մասիսը տեսնելու և քննելու, իսկ Արարատեան դաշտի բնակիչները նաև չեն մտածում մօտիկից տեսնել այն ինչ որ մեր դաշտի բնական և պատմական գեղեցկութիւնն է կազմում։

Դաւալու գիւղից կարելի է ուղիղ գնալ զաքսների Բուրլան կայարանը, որի հեռաւորութիւնը 2 ժամ ճանապարհ է, բայց ընկերներս ստիպեցին ինձ աւելի երկար ճանապարհով գնալ Մարտիրոս, ինչ ես կարծում, կարելի է արդեօք բարձրանալ մեծ Մասիսի գագաթը։ «Չէ, աղա ջան», պատասխանեց Մարտիրոսը, «Սուրբ Յակոբն ինքն փորեց բարձրանալ, որ Նոյի տապանը համբուրի, նա ամեն օր էնքան էր բարձրանում, որ հը մի քիչ էր մնում որ տեղը հասնի, մութն ընկնում էր և սուրբ Յակոբը հոգնած պարկում էր քնելու, բայց առաւօտ զարթնելով, տեսնում էր որ Մասիսի տակն, էհ, ներքին է պարված. այդ կը նշանակի, աղա ջան, որ Աստուածանից հրաման չը կայ մեծ Մասիսի գլուխն ելնելու։ Աստուած տեսնելով սուրբ Յակոբայ փափաքը տուեց հրեշտակին տապանի փայտից, որ սուրբ Յակոբը համբուրի, չէ որ նա սուրբ էր, աղա ջան։ ի հարկէ, որտեղ նա տապանի փայտը համբուրեց, այնտեղ վանք չինեց՝ սուրբ Յակոբայ վանքը, մնացեալ նրա սուրբ գօրութիւնն։

—Մարտիրոս, ուրեմն ասում ես, որ չէ կարելի։—Չէ, աղա ջան, սուրբ Յակոբը որ սուրբ մարդ էր, նրան էլ Աստուած հրաման չը տուեց, դէհ մենք, դու ինքդ գլուխս, որ մեզաւոր մարդիկ ենք, մեզ խօ հրաման չը կայ ու չը կայ։ մակէդ հանիր ուզածդ, հրաման չը կայ։ Այ սրա գլուխը կենենք Աստուած յայտնաց, ասեց Մարտիրոսը, ցոյց տալով փոքր Մասիսը։ Ես լռեցի և մենք սկսեցինք բարձրանալ։ Ես մտածում էի, ինչի ժողովուրդը պէտք է կարծէ, թէ Աստուածային հրաման չը կայ, երեի բնական դժուարութիւններ կան։

Մենք բարձրանում էինք արևմտեան կողմից։ Նկատելով գագաթի վրա ամրոցի պարսպի նման բարձրութիւն, ուղիղ գիմեցինք դէպի այդ տեղը, փոքր Մասիսի արևմտեան կողմից։ Ստորոտը փոքր ինչ քարքարտ, բայց կանանչապատ է։ Բարձրանալով, բոյսերի տեսակները պակասում

---

*) Ծանօթ. Արայ որդի Արամայ՝ որ վասն գեղոյ իւրոյ դիմացն կոչեցաւ գեղեցիկ, պայծաղատեալ գեղոյս պատուեցաւ ի Նինոսէ. և նորոյ զարգարեաց գաշխարհս հայոց. յորմէ աշխարհն այն յորում էր գլխաւոր քաղաքն Արտաշիր, կոչեցաւ Արարատ կամ Այրարատ. յորմէ և բոլոր Հայաստան ևս ի իշխանութիւն հայոց անուանեցաւ Արարատեան (3430 թ. Քրիստոսից առաջ)։ Ջամչեան

*) Ծանօթ. Ամսիա որդի Արամայիսեայ գլեաուն Արարատայ լիր անուն անուանեաց Մասիս (3120 թ. Քրիստոսից առաջ)։ Ջամչեան